ԿՐԵՄԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՆՋԱԽԱՂՆ ԱՒԱՐՏՈՒԵՑ

ՍԻՐԱԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Միաբանութեան դէպքում փոքրն էլ է աճում, երկպառակութեան դէպքում՝ բայրայւում է անգամ մեծագոյնը:

ՍԱՄՈՒՍՏԻՈՍ

Վերջին օրերին Հայաստանի Հանրապետութեան Ադրբեջանին սահմանակից շրջաններում, Արցախում, Շահումեանում, Գետաշէնի ենթաշրջանում, Մարտունաշէնում տեղի ունեցող խորհրդա- ադրբեջանական միացեալ ճակատի քաղաքականապէս սադրիչ ռազմական գործողութիւնները սկիզբ են դնում հակահայկական աւանդական քաղաքականութեան առաւել վճռական փուլին: Նպատակ ունենալով ձախողել Սեպտեմբերի 21ին Հայաստանի անկախութիւնը քաղաքականապէս եւ իրաւականօրէն (հենց ԽՍՀՄի օրէնքների օգնութեամբ) ամրապնդող հանրաքուէի անցկացումը, Կրեմլը լկտի համարձակութեամբ վերջնականապէս դէն է նետել իր կայսերապետական-երեսպաշտական դիմակը եւ բացայայտ գործում է այնպէս, ինչպիսին եղել է տասնամեակներ շարունակ: Ինչպէս դասական բոլշեւիզմի գաղափարախօսութեան ծաւալման արշալոյսին 11րդ արիւնոտ բանակը մուսաւաթական-թուրքական միացեալ ուժերով զաւթիչ պատերազմ էին մղում Գարեգին Նժդեհի, Հայաստանի Առաջին Հանրապետութեան դէմ՝ յանուն նոր բարձրացող բոլշեւիկեան կայսրութեան սահմանների ընդարձակման, այնպէս էլ հիմա՝ այս անգամ արդէն նոյն կայսրութիւնը փլուզումից փրկելու համար: Յայտնի ճշմարտութիւն է, երբ բախւում են տարբեր բնոյթի իրաւունքները, ապա վերջնական վճիռը պատկանում է բիրտ ուժին: Կրեմլը կուրացած իր ռազմական վիթխարի հզօրութեան՝ շլացնող փայլից, մեծապետական - շովինիստական քամահրանքով է վերաբերւում պատմութեան անողոք դասերին, այն դասերին, երբ մարդկութեան առաջադիմութեան եւ բարոյականութեան միացեալ հարուածներից խորտակուեցին նրան նախորդած բազմաթիւ կայսրութիւններ: Նախագահ Գորբաչովը, որը սկզբնական շրջանում փորձում էր աշխարհին եւ իր երկրին ներկայանալ ժողովրդավարի դիմակով, կայսրութեան յետագայ ամրապնդման շովինիստական նախասիրութիւնները չը-կարողացաւ թաքցնել սումգայիթի եղեռնագործութիւնից յետոյ: Այո, քաղաքական ճիզուիտը բռնուեց խղճի, անմեղ մարդկանց արեան ինդուլգենցիաներ վաճառելիս...

Այսօր Կրեմլը լրիւ բացել է կայսրութեան ստատուս-քուոն պաշտպանող միակ եւ վերջին խաղաքարտը՝ ռազմական ուժ կիրառելու ընդունակութիւնը եւ, միաժամանակ, ըստ էութեան, առաջարկել է հայ ժողովրդի հաւաքական կամքն ու վճռակա՝ութիւնը փորձարկող ապաբարոյական վերջնագիր: Բնականաբար, մեր ազգն էլ, որ բացարձակապէս գիտակցում է իր հաւերժական գոյատեւման դե-ֆակտո իրողութիւնը, պէտք է (եւ կարող է) ապացուցի Կրեմլին, որ անհնարին է Արարատ լեռը տանկային շարասեան օգնութեամբ տեղափոխել Մոսկուա գետի կամ էլ Կասպից ծովի ափ... Իհարկէ, կայսրութեան պահպանումը Կրեմլի խնդրոյ առարկան է, իսկ մեր խնդիրը Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ վերջինիս յարակից հայկական պատմական բնակավայրերի ամեն գնով ու միջոցով պաշտպանելու անկոտրում վճռականութեան կոփումը:

Հարց է առաջանում. ինչո՞ւ յատկապէս Ապրիլի վերջերին հենց սկսուեց Շահումեանի շրջանի, Գետաշէնի եւ Մարտունաշէնի հայ բնակչութեան բռնի տեղահանումների, խորհրդա-ադրբեջանական գործողութիւնները: Ինչպէս յայտնի է, Մոսկուայում Մայիս ամսին պէտք է ստորագրուի միութենական նոր պայմանագիրը, որին Անկախութեան գործընթացով շարժուող Հայաստանը չի ցանկանում միանալ: Հայաստանի, նոյնիսկ, հենց միութենական օրէնքով սահմանուած մեխանիզմի օգնութեամբ, թէկուզ, հինգ կամ տասը տարուայ ընթացքում կայսրութեան «կենսական շահերի» ոլորտից դուրս գալը այնպիսի մի հարուած է լենինեանների դինաստիայի թիկունքին, որի համար Գորբաչովին երբեք չեն ների ռուսական բոլոր ցարերը միասին վերցուած: Պարսից ծոցում Կրեմլի «ֆաւորիտի»՝ Սադդամ Հուսէյնի պարտութիւնից յետոյ նրա (իմա՝ կենտրոնի) քաղաքական եւ տընտեսական դիրքերը շոշափելիօրէն թուլացել են, ասել է թէ՝ Մերձաւոր Արեւելքում Խորհրդային Միութիւնը փաստօրէն դուրս մղուեց միւս գերտերութեան՝ ԱՄՆի կողմից: Այսինքն՝ իր ցածրորակ ապրանքները եւ ռազմական տեխնիկայի վաճառքից ստացուած վալիւտային հոսքը խիստ դանդաղել է, եթէ չասենք՝ նաեւ կտրուել (մասնաւորապէս ռազմական տեխնիկայի առումով): Այլ կերպ, կայսրութիւնը գրեթէ դուրս մղուեց համաշխարհային շուկայական համակարգի մէջ ներառուած այդ կարեւորագոյն աշխարհատարածքից: Ուստի, Անդրկովկասի, մասնաւորապէս, Հայաստանի կորուստը (նաեւ Վրաստանի ու Ադրբեջանի), նշանակում է կայսրութեանը սնող հարաւային զարկերակից զրկել, որ նկատելիօրէն կը դանդաղեցնի նորոգուող կայսրութեան մշտապէս թալանի սովոր «սրտի» աշխատանքը: Չէ՞ որ անդրկովկասեան որեւէ հանրապետութեան դուրս գալը (թէկուզ՝ հեռանկարում) «խրախուսում է» ամբողջ Անդրկովկասի անջատումը «անկախ պետութիւնների միութիւնից», այսինքն՝ «թարմացուող» ռուսական կայսրութիւնից: (Ինչպէս վկայում է պատմութիւնը, որքան «վերակառուցումներ» եւ քաղաքական համակարգերի փոփոխութիւններ է ապրում Ռուսաստանը, միեւնոյն է, կայսրութեան նուաճած ո՛չ սահմանները եւ, աւել եւս, ո՛չ ազդեցութեան «կախարդական ուժը» այդ տարածքների նկատմամբ, չի փոխւում: «Զարմանալի» օրինաչափութիւն): Ինքնին հասկանալի է, որ Գորբաչովը եւ նրա արքունիքի միւս անդամները երբեք չեն կարող հաշտուել այս «հրէշաւոր» իրողութեան հետ: Էլ չենք խօսում այն փաստի մասին, որ Արցախի միջոցով կենտրոնը առայժմ «մեծ յաջողութեամբ» սանձում է թէ՛ Հայաստանին, եւ թէ՛ Ադրբեջանին՝ երկու պետութիւններին էլ զրկելով անկախանալու հնարաւորութիւններից: Հարկ է նշել, որ առկայ է նաեւ Թուրքիային «դուր գալու» ոչ պակաս կարեւոր հանգամանքը: Գորբաչովը Օզալին խոստանալով, որ ամեն մի անբարոյական միջոցի կը դիմի, որպէսզի Արցախը դարձեալ մնայ «Ադրբեջանի անբաժանելի մասը», դրանով նա Թուրքիայից թ՛ւ վարկեր է ստանում, թ՛ւ նրա անմիջական օգնութեամբ դէպի Մերձաւոր Արեւելք բարեբեր ելք է ապահովում՝ նոր շուկաներ ձեռք բերելու նպատակով:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր հարիւրամեայ քաղաքական փորձառութեամբ զինուած միանում է հայրենի կառավարիչներին՝ «...համոզումով, որ Հայաստանի իշխանութիւնները պետականօրէն եւ անյապաղ պաշտպան կը կանգնեն Արցախի, Գետաշէնի եւ Շահումեանի հայութեանը»:

Վտանգի պահին ոչ թէ խօսքով, այլ գործով միաւորուելու կոչ է դա նաեւ: Կարծում ենք, որ արդէն մեր ժողովրդի համար բոլոր առումներով յստակուեցին Կրեմլի քաղաքական մնջախաղերի դաւադիր ու նենգ իմաստները:

Ուստի, Կրեմլը նպատակասլաց գործում է, իսկ մենք ազգային միաձոյլ կամքով նրա դէմ պէտք է կանգնենք ինչպէս Արարատ լեռը...